

ՀԱՅ ԳՐՔԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Հատար Ա.

Հայ տպագիր գիրքը՝ 16-17րդ դդ.

Գրեց

ՌԱՅԱՅԷԼ Ա. ԻՇԽԱՆՆԵԱՆ

Երևան, «Հայաստան» Հրատ. 1977, էջ 536, տպագրման՝ 1000:

Եթէ դիրքը սիրելի է մէկի, ապա ինչպէս սիրելի պէտք է լինի մի գիրք, որ ամբողջութեամբ յատկացուած է գրքին, ու տալիս է գրքի պատմութիւնը: Եթէ վարդապետը անուշահոտ է, ապա ինչպէս հաճելի կը լինի՝ որ այդ բոլորն առնես թարմ վարդից: Ահա՛ այսպիսի մի հաճոյք էլ ստացանք տեսնելով ու կարդալով տպագիր գրքի հըմուտ ուսումնասէր Ռաֆայէլ Իշխանեանի «Հայ գրքի պատմութիւն» խիստ օգտակար աշխատութեան Ա. հատորը:

Վերջին տասնամեակներում, յատկապէս հայկական տպագրութեան ուսումնասիրական մարզում, լայն ծաւալ ստացաւ հայ հնատիպ գրքերի հետազոտման եւ ուսումնասիրութեան խնդիրը: Այդ առթիւ յատկապէս գործի անցաւ Միսանիկեանի անուան Հանրապետական Գրադարանի մատենադիտական բաժնի կազմը, 1963 թուին լոյս ընծայելով իր «Հայ հնատիպ գրքի մատենադիտական ցուցակը», որը մի նոր էջ բացելով հայ տպագիր գրքի պատմութեան համար, ըսկզբնաղբիւր դարձաւ նոր ու աւելի եռանդուն աշխատանքների, նոր հետազոտութիւնն ու աշխուժութիւն մտցրեց մեր ժողովրդի գրասէր լայն խաւերի մէջ եւ անգամ ոճանց մղեց իրազմելու հնատիպ գրքերի հաւաքածոներ:

Ռաֆայէլ Իշխանեանի «Հայ գրքի պատմութիւն» աշխատութիւնը այդ ճիւղի արդիւնքն է, որ եկաւ ամբողջացնելու եւ մանրամասնելու եւ քննութեան բովից անցկացնելու հայ հնատիպ գրքերի մասին կազմուած ցուցակները

եւ վաւերական տուեալներով նոր լոյսի տակ բերելու հնատիպ գրքերի տպագրութեան խնդիրը:

«Հայ գրքի պատմութիւն»ը, որ ինձ թւում է աւելի լաւ էր՝ եթէ կրած լինէր «Հայ գրքի տպագրութեան պատմութիւն»ը խորագիրը, ունի սկզբում մի պատշաճ «Նախաբան», ինչպէս եւ հին ու նոր ուղղադրութեան մասին մի քանի ընդհանր խօսք, ուր շատ իրաւացի կերպով անդրադառնում է դրան, որ իրապէս մի թնճուկ է դարձել հայ գրագրանների համար, գրքերի խորագրերը արձանագրելու ժամանակ:

Իշխանեանը գրքի ութը դուրսների մէջ, առանձին-առանձին, անդրադառնում է հայերէն լեզուով տպագրուած առաջին գրքերին, ուր երկարորէն կանգ է առնում Յակոբ Մեղապարտի (նախընտրելի է ասել՝ Տպագրիչի) կատարած տպագրութեան, նրա անձին ու գործին, յանդիման հետեւեալ դեղքերի եզրակացութեան.

«Մեծարգատառ տպագրութեան ծընունդը 16րդ դարի Հայոց մշակութային ամենախոշոր երեւոյթն էր, ոչ միայն այն պատճառով, որ այդ հարիւրամեակում թոյլ էին դարձանում հայկական մշակոյթի աւանդական հիւղերը, այլ նաեւ այն, որ այդ ծնունդը սկզբնաւորումն էր հետագայում տարբեր բնագաւառների ազգային գրականութեան հիմքը դարձած հայատառ տպագրութեան» (էջ 174):

Այսպէս, Յակոբ տպագրիչը իր կատարած գործով, հայ ժողովրդին տալիս է մի նոր ու կարեւոր միջոց, բացում է նոր ուղի, որպէսզի մենք եւս մեր արժանի տեղը կարողանանք գրաւել միւս առաջադէմ ազգերի շարքում:

Այստեղ միջանկեալ յիշենք, որ Յակոբի տպագրած գրքերից նոր Զուղայի վանքում ունենք երկուսը՝ «Պատարագատետր» եւ «Ուրաքագիրք»ը, որոնց մասին յիշուած չեն, նման այլ ցանկերում:

Յակոբի տպագրութիւնից յետոյ, յաջորդաբար խօսուում է Արզար Գալիւրի ճիւղերի մասին (էջ 180-232), ուր արուած է նրա կատարած աշխատանքը, «Կենսագրական դժեւք»ը, տպագրական գործունէութիւնը, գրքերի ցանկը, էջերի նմոշներով եւ զանազան մէջբերումներով ու կարեւոր լուսաբանութիւններով:

Հինգերորդ դուրսը յատկացուած է Սուրբանշահին եւ Յովհաննէս Տերզնու (էջ 233-291), որտեղ եւս մանրացուն է նրանց անդրադարձել է նրանց կատարած գործին, որոնց խոսքումը հեղինակի հետեւեալ դեղքերի տողերն են, որ բերում ենք ստորեւ.

«Յակոբ Մեղապարտը, Արզար Գալիւրը, Սուրբանշահը եւ Յովհաննէս Տերզնուին՝ իր որդի ինչպատուրի հետ միասին, իրօք մշակութային խոշոր գործիչներ են՝ առանց չափազանցման, քանի որ հայութեան ու Հայաստանի համար շատ դժուարին դարձաւ, երբ մշակոյթի բնագաւառում ամլութիւնը համատարած էր դառնում Հայոց մէջ՝ մեծարգատառ գրքերի հայեւ դրանով եղան սկսուող նոր ժամանակներում հայ գրի ու գրքի, Հայոց լեզուի պահպանման առաջամարտիկներ» (էջ 290):

Գրքի վեցերորդ դուրսը յատկացուած է 16րդ դարի հայերէն տպագրութիւնին՝ այլաբեղով գրքերում եւ «Հայաստանի»՝ այլաբեղով գրքերում, դիտական վաղ հրատարակութիւնները որոնց մասին արուած տեղեկութիւնները նոյնպէս հետաքրքրական են: Այնտեղ նշուած են նաեւ մի քանի էջերի նմաբերումներ, որոնցից մէկը 1538 Նահանութիւնների, որոնցից մէկը 1538 թուին տպուած հայերէն տէրունական թուիքն է, իսկ մի ուրիշը՝ տպուած 1586 թուին փարիզում, հայերէն Այբուրբը: Վերջում կայ (էջ 313-314) 16րդ դարում տպագրուած այդ գրքերի ցանկը: Նմանատիպ գրքերից մէկը 17րդ դարի հայ տպագրութիւնը զանազան երկրներում, ինչպէս՝ Հոռոմ, Իւով, զան երկրներում, ինչպէս՝ Հոռոմ, Իւով, զան Զուղա, Վենետիկ, Կոստանդնուպոլիս եւ այլուր:

Այս վայրերից ամէնից առաւել մեղ հետաքրքրում է նոր Զուղան, որին

յատկացուած քաժնում եւս (էջ 351-379), հայ տպագրութեան խնդրին լաւածանօթ Ռաֆայէլ Իշխանեանը, հմուտ բանասէրի ձեռնհասութեամբ, տալիս է անհրաժեշտ տեղեկութիւններ, օգտագործելով այդ առթիւ տպագրուած գրքերը եւ դրանց հետ զուգորդելով իր ուսումնասիրութիւններն ու կարծիքները, հետեւեալ եզրակացութեամբ.

«Խաչատուր Կեսարացու եւ նրա օգնականների կատարածը մէկն էր այն եզակի մեծագործութիւններից, որ իրականացուել է հայ դպրութեան պատմութեան մէջ Սահակ Պարթևից եւ Մեսրոպ Մաշտոցից յետոյ, նաեւ անմիջապէս արգասիքը 17րդ դարում Սինեայի անապատի շնորհիւ Հայոց մէջ սկսուած մշակութային վերածնութեան:

«Հայ տպագրութեան պատմութեան մէջ, կարծում ենք, ինչպատուր Կեսարացին իր գործով գրեթէ հաւասարում է Յակոբ Մեղապարտին: Կարեւորն այն է, որ նոր Զուղայում հայկական տպագրութիւն ստեղծուեց նախ բոլորովին ինքնուրոյն, ապա միայն հայկական միջոցներով: Եւ հիմաւոր է ինչպատուր վարդապետի այդ ձեռնարկումն անուանել տպագրութեան իմմունութիւնը հայկական են, էջ 356):

Այս մասում (էջ 362), յիշելով ինչպատուր Կեսարացու տպագրած գրքերի հերթականութեան մասին, դասաւորումը տալիս է այն ձեւով, ինչպէս որ մենք դրել էինք «Նոր Զուղայի տպարանը» գրքում (էջ 419), ստորաւիճանում է. «Զորս գրքերը այդ նոյն հերթականութեամբ է դասաւորել Լ. Մինասեանը, քէն չի պատճառաւորել, թէ ինչու է «Հարանց վարք»ը իրարեւորութիւնից առաւել գրել» (էջ 328, ընդգծումը մեր կողմից):

Նկատի ունենալով որ գրքերի վերջում եղած յիշատակարանների մէջ յիշուած թուականները տպագրութիւնների վերջնական թուականներն են, ապա անհրաժեշտ է ասել, որ իրականում մինչեւ այժմ ընդունուած թուականներին միայն «Նոր Զուղայի տպարան» է, որ

1. Այդ գրքերի մասին ասելի մանրամասն, տեսնել մեր մի յօդուածը «Հասկ» ամսագրում (1966, թ. 11-12, էջ 440-441):

Համապատասխանում է գրքի տպագրության սկզբնական (եւ վերջնական) թուականին: Այսինքն՝ երբ 1641 թուին լրացում է Հաբանց վարձի տպագրությանը, (որն եւս սկսվում Կոստան 1639 թ. վերջավորությամբ կամ 1639 թ. ըսկիցներում), նոյն թուին եւս տպագրություն (այսինքն սկսվում ու վերջացել) է ձեռնարկատեսքը²:

Ինչպես յիշեցինք Հաբանց վարձի Համար, այնպես էլ միւս գրքերի տպագրությանը որպէս թուական ճիշտ է ընդունել 1638, 1641 եւ 1642 թուականները, որովհետեւ դրանք երեքն էլ գրքերի աւարտման թուականներն են, գրեթե՝ գրքերի վերջին էջերի յիշատակարաններում, ուրեմն իրականում պէտք է ընդունել, որ Վաղմոսի տպագրութիւնը սկսվում է 1636 թուին եւ աւարտում է 1638 թուին, (թէեւ աւարտման ամսաթիւնը չգիտենք, որպէսզի դրանից մէկ տարի եւ հինգ ամիս առաջ գրեանք, ճիշտ թիւը գտնելու համար): Հաբանց վարձը սկսվում է 1638 կամ 1639 թուին եւ աւարտում է 1641 թուին, ձեռնարկատեսքը սկսվում ու աւարտում է 1641 թուին, իսկ Ժամագիրքը սկսվում է 1641 թուին եւ աւարտում է 1642 թուին (թեքեւս վերջավորութեանը):

Իշխանեանը խօսելով Յովհաննէս վարդապետի Եւրոպայից բերած քիւնէներին մասին, գրում է. «Պէտք է ընդունել, որ որեւէ անձ կամ ինքը Յովհաննէսը, արեւմուտք մեկնելուց առաջ, արտանկարել է այդ որմանկարները եւ ապա իտալիայում պատրաստել են նրանց փորագրութիւնները» (էջ 378):

Որպէս լուսարանութիւն՝ անհրաժեշտ է ասել, որ Յովհաննէսի Եւրոպա մեկնումն թուականին (1638ին), ինչպէս եւ

քիւնէներին պատրաստման օրերին (1642 թուին) Ամենափրկիչ վանքի տաճարը դեռեւս կառուցուած չէր (կառուցուել է 1655 թուին), իսկ վանքում եղած նոյն քիւնէներին նմանութիւն ունեցող նկարները, որոնք կարծւում է որ նկարուել են Յովհաննէս Մրգուզի ձեռքով, գրեւորում են ոչ վաղ քան 1710 թիւը, երբ նոյն օրերում տեղադրուել են նաեւ վանքի տաճարի պատերի ցածր մասի յախճապակիները, եւ երբ փակուել է նաեւ Ժողովրդեան մասի հարաւային պատի վրայի դուռը, եւ վերի մասում (յախճապակիից վերեւ) գծուել այդ քիւնէներից մէկի պատկերն ունեցող նկարը: Մեզ հաւանական է թուում հաւանակը, որ այդ քիւնէներին վրայից է որ դրուել են վանքի որմանկարները⁴:

Վերեւ յիշուած քիւնէներից բացի, Յովհ. վարդապետն իր հետ Եւրոպայից բերել է մեծ ու փոքր այլ քիւնէներ եւս, որոնցից ներկայիս ձեռքի տակ ունենք 61 հատ, որոնք ունեն լատիներէն գրութիւններ, իսկ նկարները սրտկանում են Աւետարանին, Յիսուսի ծնունդին, խաչելութեանը, Աւետարանիչներին, Աստուածածինին, զանազան սուրբերին եւ այլն: Մեզ անյայտ է նաեւ թէ այս քիւնէներով որեւէ գիրք տպագրուել է՝ թէ ոչ, կամ արդեօք Խաչատուր Ջուղայեցու յիշած զբաղում գրքերի մէջն են եղել սրանք էլ՝ չգիտենք:

Յովհաննէս վարդապետի Եւրոպա գրեւորում եւ նրա տպագրական ճիշդի մասին պատշաճ լուսարանութիւններ տալով, Ռ. Իշխանեանը կասկած է յայտնում (էջ 376). «Այդ տպագրութիւնը (Աստուածաշունչը - Լ. Մ.) անսպասելի Յովհաննէս Ջուղայեցու նախաձեռնութիւն համարելը կարծես մի փոքր հարցականի տակ է դրուում», գրում է:

ԱԼԻՇԱՆ

Գրեց

ՍԱՔՈՑ ՍԱՐԳՍԵԱՆ

Իրեւան, «Սովետական Գրող» Հրտ. 1978, էջ 215:

Բանաստեղծական շունչով մենագրութիւն մըն է այս հատորը, ուր կը պատկերացուի Հ. Ղեւոնդ Ալիշանի դէմքը: Գեղեցիկ յղացում մը՝ Տիար Սարգս Սարգսեանի կողմէ, նպատակ ունենալով մերձենալի դարձնել Ալիշանը Ժողովուրդին, առնելով միայն Նահապետի «կեանքից պատկերներ»:

Հեղինակը մեծ յարգանքով ու պաշտամունքով է որ կը մօտենայ Ալիշանին. իւրաքանչիւր էջ կը մատնանէ իր հիացմունքը, սէրն ու համակրանքը Ալիշանի հանդէպ, վը յաջողի գծել Ալիշանի խրճանկարը՝ իւրաքանչիւր ոճով մը: Սակայն, հեղինակին մերձեցումի ձեւը Ալիշանի անձին՝ ներշնչուելով հանդերձ հիմնականին մէջ ապստիսի դրական կեցողութեան մը՝ որոշ մանրամասնութիւններու մէջ կը թուի տեղի տալ ինչ ինչ բացասական անդադարձութիւններու:

200է աւելի էջերէ բաղկացած հատոր մըն է, բաժնուած երեսունհինգ անվերնագիր գլուխներու, ուր կը պատմուի Ալիշանի կեանքը՝ ծնունդէն մինչեւ մահ: Առաջին անգամ Հ. Սիմոն Երեմեանն էր՝ որ երեւան հանց 1902ին «Կենսագրութիւն Հ. Ալիշանի» հատորը. այսօր Սարգսեան երկրորդ փորձ մըն է որ կը կատարէ, քայելով Երեմեանի հետքերուն վրայէն, փոխելով կարգը, ոճն ու եղանակը, դոյն տալով անոր, յօրինելով ամբողջովին նոր մը:

Թէ արդեօք Սարգսեան լրիւ յաջողած է իր այս ձեռնարկին մէջ, չէ կարելի հաստատել. իր անհատնում կրկնութիւններուն շնորհիւ՝ գուցէ կրցած է դուրս ցայտեցնել Ալիշանի հայրենասիրութիւնը. նոյնպէս յաջող կրնանք նկատել այն էջերը՝ ուր Ալիշան կը ներկայանայ իբր զազային դործիչ. սակայն հատորին մէջ չի պատկերանար մեղի Ալիշան մը

Աստուածաշունչի այդ օրերում տպագրուելու մասին, մեզ թւում է կասկածել պէտք չէ, քանի որ Խաչատուր Ջուղայեցին Յովհաննէսի տպագրութեանց մասին խօսելիս՝ պարզ ու որոշ ասում է. «Սկսան ընդ որոց եւ տպել զԱստուածաշունչ գիրն», այսինքն՝ ներանք (Յովհաննէս վարդապետը - Լ. Մ.) որ տպում էին: Իսկ ինչ վերաբերում է աստուածաշունչի տպագրութեան թուականին (1650), մենք նշել ենք Հարցականով՝ ճիշտ տարեթիւն չգիտենք:

Իշխանեանը մի տեղին յիշեցում է անում (էջ 397) որ «Երեւի ստոյգ չէ ասել թէ շուրջ 330 տարի անյայտ է մընացել մեր բանասէրներին: Բնականաբար, իւրաքանչիւր նոր տպագրուած գիրք, իր լոյս տեսնելուց տասնեակ տարիներ դուրս է ածուած, ուստի՝ անյայտ է՝ խօսքն այդտեղ վերաբերում է մեր շուրջ մէկ դարու բանասէրներին, որոնք հնարաւորութիւն չեն ունեցել գիրքը տեսնելու:

Ութերորդ գլուխը յատկացւած է Ոսկանեան տպարանին, (էջ 405-531), ուր 125 էջի մէջ մանրամասն լուսարանութիւններով խօսում է Ոսկան վարդապետի եւ նրա աշակերտների կողմից կատարուած տպագրութիւնների մասին, որի վերջում տալիս է նաեւ ցանկը Ամսդերտամում (20 գիրք), Լիվոռնոյում (3 գիրք), Մարսելում (16 գիրք) եւ Ջմիռնիայում (հաւանաբար 1) տպագրուած գրքերի, որոնց գումարն է 40:

Ռաֆայէլ Իշխանեանի այս հատորը, իր ընդգրկած նիւթով, ունի խորք ու ծաւալով հարուստ մի վերլուծութիւն, որ կարդացւում է մեծ հետաքրքրութեամբ եւ ընթերցողի աչքի առաջ բերում հայ նախնական տպագրութիւնների առթիւ անհատական եւ հաւաքական այն ճիշդը, որոնցով այսօր հայ Ժողովուրդը հպարտ է:

Ակնդէտ սուսանք սրան յաջողող հատորներին, որոնց մասին արդէն խօսք կայ Նախարանի մէջ:

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

2. «Ձեռնարկատեսքի մասին աւելի մանրամասն գրել անք Վիտն» ամսագրում (1906 թ. 7, էջ 357):

3. Ներկայիս Վաղմոսի մի լրիւ լուսարանէն ունենք վանքի թանգարանում, այդ գիրքը, Լոնդոնից մեծ հաճոյքով Օքսֆորդ գնացի, վախելով նաեւ բարեհալիսութիւնը Բողոքական դարաշրջանի վարիչ Դէյվիդ Բարբերտի - Լ. Մ.

4. Այս մասին աւելի մանրամասն տեսնել մեր «Իրաւի հայկական վանքերը» գրքում, (էջ 59):